# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 17.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 6-ի նյութական իրավունքի բաժնի 3"27-րդ , 9"31-րդ, 10"45-րդ, 12"74-րդ, 18"38-րդ, 19 "41-րդ, 31"64-րդ, 33"46-րդ, 35"10-րդ հարցերը:

***27-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի փաստարկումը չի բխում խնդրում ներկայացված փաստերի վերլուծությունից, քանզի պարտական վերաբերյալ որևէ հանգամանք առկա չէ*, ուստի գնահատականը չի բարձրացվում:

***31-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում խնդրում առկա փաստերից: Միևնույն ժամանակ հավակնորդը Գ-ի և Դ-ի արարքները չի քննարկել կաշառք ստանալու և տալու համատեքստում, այն պայմաններում, երբ կաշառքի առարկա կարող են լինել նաև ոչ նյութական առավելությունը, այդ թվում՝ սեքսուալ բնույթի ծառայությունները, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

***45-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի տրվում է 1 միավոր:*

***74-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները ընդունելի չեն, քանի որ, խնդրում առկա տվյալները հիմք չեն տալիս գալու նման եզրահանգման, սխալ է մեկնաբանվել չհաջողված հանցակազմության ինստիտուտի դրույթները, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

***38-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի մեկնաբանությունները ընդունելի չեն, քանզի հավակնորդի ընտրված պատասխանը սխալ է, իսկ նման խնդրի նախատեսման*

*նպատակահարմարության հարցը դուրս է հանձնաժողովի գնահատման տիրույթից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

***41-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի փաստարկումը չի բխում քրեական օրենքի տրամաբանությունից, քանզի հափշտակության կատարումն այլ անձի ներկայությամբ /բացառությամբ հանցակիցների/ այն պայմաններում, երբ հանցավորը գիտակցել է, որ այդ անձը ընկալում է իր կողմից կատարվող արարքի բնույթը, չի կարող գնահատվել գաղտնիության պայմաններում կատարված, ընդ որում որևէ նշանակություն չունի այդ անձը սեփականատերն է, թե՝ մեկ ուրիշը, հետևաբար հավակնորդի հիմնավորումը ընդունելի չէ, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

***64-րդ հարցի*** *վերաբերյալ հանձնաժողովն արձանագրում է, որ թեև շարունակվող հանցագործությունը ենթադրում է նույնական արարքների կատարում, ինչը հավաստվել է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ, սակայն հաշվի առնելով այն, որ հափշտակության պարագայում դրանց եղանակների՝ մեկը մյուսին վերաճման հանգամանքը քննարկման առարկա չի դարձվել ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ, հիմք է տալիս ընդունելի համարել հավակնորդի կողմից դոկտրինալ աղբյուրներով հիմնավորված դիրքորոշումը, ուստի տրվում է 1 միավոր:*

***46-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում խնդրում առկա հանգամանքներից, ինչպես նաև փաստական սխալի որակման կանոններից, ընդունելի չէ համակցության կանոնների հիման վրա հեղինակի կողմից ընտրված տարբերակի հիմնավորումը, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

***10-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները կրկնում են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտած դիրքորոշումները, մյուս կողմից խնդրի պայմանների ոչ հստակությունը թույլ չի տալիս գալ միանշանակ եզրահանգման, ուստի նշվածը մեկնաբանելով հօգուտ հավակնորդի , տրվում է 1 միավոր:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***5487*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն" նյութական իրավունքից ստացված 20 միավորը բարձրացնել 3 միավոր՝ արդյունքում արձանագրել 23 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ